600.0305.25.07.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

25 հուլիսի 2018 թվականի №305Ա
ք. Երևան

«ՔԱՆԱՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0366 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՔԱՆԱՐ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հուլիսի 23-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 28-ի «ՔԱՆԱՐ» փակ բաժնետիրական ընկերությանը «Սառնակունք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №401Ա որոշմամբ «ՔԱՆԱՐ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0366 լիցենզիան՝ լիցենզիայի պայմանների «գտնվելու վայրը» տողը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

   «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Գ. Տաթևացու փ., 7 շ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 26-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՏԵՂԱԿԱԼ — **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
25 հուլիսի 2018